ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«03» դեկտեմբերի, 2019թ.
ժամը՝ 13.00

ք. Երևան

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու,

Էդգար Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու,

Գրիգոր Գաբրիելյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի քարտուղար՝

Օֆելյա Ասատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

---

1. **Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/17» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2019թ.-ի դեկտեմբերի 3-ին, ժամը 13:00-ին:

2. **Տեղեկություն՝ գնման առարկաների ընդհանուր գնի վերաբերյալ.**

Գնման ընթացակարգը կազմակերպվել է <<գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը
1	*Կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայություններ*

3. **Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

Մասնակցի անվանումը (անունը)	Էլեկտրոնային փոստի հասցեն
ԱՁ Անուշ Պետրոսյան	ga-c@mail.ru
«Թերմոկոն» ՍՊԸ	info@thermocon.am
«Ջերմաէներգո» ՍՊԸ	Melkonyan.mushegh@yandex.com

4. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

Անուշ Պետրոսյան ԱՁ -ի, «Թերմոկոն» ՍՊԸ-ի և «Ջերմաէներգո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0

5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացրած հայտի կազմման՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանության մասին.

Անուշ Պետրոսյան ԱՁ-ի, «Թերմոկոն» ՍՊԸ-ի և «Ջերմաէներգո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, ուստի վերջիններս գնահատվում են բավարար:

www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգում «Ջերմաէներգո» ՍՊԸ-ի կողմից լրացված գնային առաջարկ՝ առանց ԱԱՀ-ի գումարը չի համապատասխանում Գնային առաջարկի (Հավելված 2) «Ինքնարժեք» սյունակում նշված գումարին, սակայն ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

6. <u>Մասնակիցների առաջարկած գները՝</u>

Հ/Հ	Ծառայության անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)		
		Անուշ Պետրոսյան ԱՁ		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	*Կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայություններ*	1 561 000	-	1 561 000

Հ/Հ	Ծառայության անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)		
		«Թերմոկոն» ՍՊԸ		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
2	*Կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայություններ*	1 650 000	330 000	1 980 000

Հ/Հ	Ծառայության անվանումը	Գնային առաջարկները (ՀՀ դրամ)		
		«Ջերմաէներգո» ՍՊԸ		
		Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	2	3	4	5
1	*Կաթսաների վերանորոգման և պահպանման ծառայություններ*	2 460 000	-	2 460 000

Հանձնաժողովը որոշեց.

Հաշվի առնելով, որ սույն գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ համաձայն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ անհրաժեշտություն է առաջանում՝ առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների՝ Անուշ Պետրոսյան ԱՁ-ի, «Թերմոկոն» ՍՊԸ-ի և «Ջերմաէներգո» ՍՊԸ-ի հետ վարելու միաժամանակյա բանակցություններ:

Հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ պարբերությամբ՝ հանձնաժողովը որոշեց՝ հանձնաժողովի նիստը կասեցնել և միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրել նիստ 2019թ. դեկտեմբերի 5-ին՝ ժամը 11:00-ին՝ Դատական դեպարտամենտի շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5)

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝ _____ Էդգար Տոնականյան

_____ Էդգար Մելքոնյան

_____ Գրիգոր Գաբրիելյան

_____ Ավետիք Ավագյան

Քարտուղար՝ _____ Օֆելյա Ասատրյան